



ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Կանոններում գործածվող հիմնական եզրույթներ և հասկացություններ

Սույն կանոններում գործածվող հիմնական եզրույթներն ու հասկացությունները սահմանվում են հետևյալ կերպ:

- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություններ – Պետական մարմիններ, որոնց հովանու ներքո է իրականացվում մրցույթը ՀՀ-ում և Արցախում:
- «Այբ» կրթական հիմնադրամ – Մրցույթի բացառիկ կազմակերպիչը ՀՀ-ում և Արցախում (Երևան 0037, Ազատության պող., 1/21-1, (060) 70-17-07, kangaroo@ayb.am, www.kangaroo.am, www.ayb.am):
- «Կենգուրու առանց սահմանների» միջազգային ընկերակցություն (KSF) – Կազմակերպիչը ողջ աշխարհում (կենտրոնական գրասենյակը գտնվում է Փարիզում, www.aksf.org):
- Մարզային համակարգողներ – Մրցույթի աշխատանքային խմբի անդամներ՝ «Այբ» հիմնադրամի աշխատակիցներ, ովքեր անմիջականորեն զբաղվում են մրցույթի կազմակերպչական հարցերով: Համակարգողների տվյալները տրված են www.kangaroo.am կայքում և մրցույթի իրազեկման նյութերում:
- Կրթական կառույց – «Կենգուրու» մրցույթին մասնակցության հայտ ներկայացրած հանրակրթական հաստատություն (դպրոց, կրթահամալիր, քոլեջ և այլն):
- Մրցույթի պատասխանատու՝ ուսումնական հաստատությունում – Կրթական կառույցի կողմից լիազորված աշխատակից, որը համակարգում է մրցույթի կազմակերպման հետ կապված բոլոր աշխատանքները (աշակերտների իրազեկում, հայտի, ցուցակների կազմում): «Այբ»-ը և մարզային համակարգողները կապ են պահպանում անմիջապես մրցույթի պատասխանատուի հետ:
- Մասնակիցներ – Դպրոցի 3-12-րդ դասարանցիներ, միջին մասնագիտական ուղղվածությամբ քոլեջների 1-3-րդ կուրսերի ուսանողներ, որոնք մինչև հայտարարված վերջնաժամկետը վճարել են մասնակցության համար և, անդորրագիրը ներկայացնելով իրենց ուսումնական հաստատություն, ներառվել են նրա մասնակիցների ցուցակում կամ գրանցվել են մրցույթի առցանց հարթակում ա) կցելով անդորրագրի նիշքը, բ) առցանց վճարելով մասնակցության համար:
- Հուշանվերներ – Մրցույթի բոլոր մասնակիցներին տրվող Էլեկտրոնային նվերներ, որ ուղարկվում են մասնակցի՝ հարթակում գրանցվելիս նշած Էլ. հասցեին:
- Մրցանակներ – Արդյունքների ամփոփումից հետո բոլոր մասնակիցներն Էլփոստով ստանում են մասնակցության Էլեկտրոնային հավաստագրեր, որ փաստում են վաստակած միավորը, իսկ մրցանակակիրներին շնորհվում են խրախուսական մրցանակներ: Մրցույթին մասնակցության հայտ ներկայացրած դպրոցները ստանում են մասնակցության հավաստագիր (Էլեկտրոնային):
- Մրցույթի մրցանակակիրներ – Մրցույթն ունի երկու կարգի մրցանակակիր՝ *հաղթող* (3-4-րդ դասարանցիներ, ովքեր հավաքել են 96 միավոր, կամ 5-12-րդ դասարանցիներ, ովքեր հավաքել են 120 միավոր), և *լավագույն* (3-4-րդ դասարանցիներ, ովքեր հավաքել են 91-93 միավոր, կամ 5-12-րդ դասարանցիներ, ովքեր հավաքել են 115-117 միավոր):

- Մրցույթի մասնակցության հայտ – Դպրոցի կողմից լրացված և մինչև հայտարարված վերջնաժամկետը «Այբ» հիմնադրամ ուղարկված էլեկտրոնային հայտ: Դպրոցը մասնակցում է մրցույթին միայն նշված ժամկետում հայտը ներկայացնելու դեպքում: Հայտի հետ kangaroo@ayb.am էլ. հասցեին պարտադիր պետք է ուղարկվեն մասնակիցների ցուցակը և վճարման անդորրագրերի էլեկտրոնային նմուշները (էլեկտրոնային անդորրագիր, թղթային տարբերակի լուսանկար, տեսապատճեն): Մրցույթին կարող են մասնակցել բոլոր կրթական կառույցները, որոնք ունեն մեկ և ավելի աշակերտ:
- Մասնակիցների ցուցակ – Մասնակից աշակերտների ցուցակ, որը կազմում է մրցույթի պատասխանատուն: Ցուցակում ներառվում են մրցույթին մասնակցել ցանկացող այն աշակերտները, ովքեր ներկայացրել են մասնակցության վճարի անդորրագրերը՝ տրված բանկից (նաև առցանց վճարման էլեկտրոնային անդորրագրերը, եթե վճարվել են առցանց բանկինգի միջոցով) կամ Easy Pay, TelCell տերմինալներից: Մասնակիցների ցուցակի էլեկտրոնային տարբերակն ուղարկվում է հայտի հետ kangaroo@ayb.am էլ. հասցեին: Եթե վճարումն արվել է test.contests.am հարթակից, անդորրագիր ուղարկելու կարիք չկա:
- Մրցութային փաթեթ – Տվյալ տարվա թեստային առաջադրանքների տարբերակներ՝ նախատեսված հինգ տարիքային խմբերի համար: Մրցույթի օրն առցանց հարթակ մուտք գործած յուրաքանչյուր մասնակցի համար մրցույթի մեկնարկից հետո հասանելի են լինում միայն նրա տարիքային խմբի համար նախատեսված առաջադրանքները: Բոլոր տարիքային խմբերի առաջադրանքները չկրկնվող են:
- Դպրոցի ծածկագիր – Դպրոցին «Այբ»-ի կողմից շնորհվող թվային անփոփոխ ծածկագիր (բոլոր տարիների համար), որը կարելի է գտնել www.contests.am կայքում կամ իմանալ մարզային համակարգողներից: Այս ծածկագիրը նշվում է դպրոցի հայտն ու մասնակիցների ցուցակը լրացնելու, նաև տերմինալներով վճարում կատարելու ժամանակ:
- Մրցույթի առցանց հարթակ – Առցանց հարթակ (test.contests.am), որտեղ անցկացվում է մրցույթը: Մրցույթին մասնակցելու համար վճարում կատարած աշակերտներն այս հարթակում գրանցվում են, մուտք գործում համակարգ, մասնակցում մրցույթին, թեստը լրացնում նշելով յուրաքանչյուր հարցի համար առաջարկվող 5 պատասխաններից նախընտրելի ճիշտ տարբերակը, ավարտված աշխատանքը հաստատում և ուղարկում ստուգման: Իր դպրոցի ցուցակում չներառված աշակերտը կարող է ինքնուրույն գրանցվել test.contests.am հարթակում: Հարթակում գրանցման երեք տարբերակ կա:
- Տարբերակ 1. Գրանցվել եմ դպրոցում և վճարել – Դպրոցի մասնակցության ցուցակներում նախապես ներառված աշակերտները պիտի գրանցվեն այս հարթակում սահմանված ժամկետից հետո՝ ակտիվացնելով որպես օգտատեր իրենց պրոֆիլը, որպեսզի կարողանան մրցույթի օրը մուտք գործել և լրացնել մրցութային թեստը:
- Տարբերակ 2. Վճարել եմ, բայց չեմ գրանցվել դպրոցում – Մասնակցության համար նախապես վճարած և վճարման անդորրագիր ունեցող մասնակիցն ինքնուրույն կամ ծնողի օգնությամբ գրանցվում է հարթակում ներբեռնելով անդորրագրի նիշքը:
- Տարբերակ 3. Չեմ գրանցվել դպրոցում և չեմ վճարել – Այս տարբերակն ընտրելիս պետք է մտնել հարթակ, սեղմել «Գրանցվել» կոճակը, ընտրել 3-րդ տողը և լրացնել բոլոր դաշտերը՝ միաժամանակ կատարելով վճարումը «Թելսել» էլեկտրոնային դրամապանակի կամ բանկային քարտի տվյալները նշելով:
- Գրանցվելու համար կարող եք դիտել այս ուղեցույցները.
 - Համակարգչով գրանցվելու համար՝ <https://youtu.be/2thOJsTvSm8>
 - Հեռախոսով գրանցվելու համար՝ <https://youtu.be/v-7qXmYzjAQ>

1. Մրցույթի մասնակիցներ

- 1.1. Մրցույթի հիմնական նպատակը դպրոցականների ամենալայն շրջանում մաթեմատիկայի հանդեպ հետաքրքրության խթանումն է, ուստի մրցույթին կարող են մասնակցել 3-12-րդ դասարանցի կամ քոլեջների 1-3-րդ կուրսերի բոլոր ցանկացողները: Մրցույթի խնդիրների տարբերակները բաժանված են ըստ հինգ տարիքային խմբերի՝ 3-4-րդ, 5-6-րդ, 7-8-րդ, 9-10-րդ և 11-12-րդ դասարաններ: *Որևէ նախնական ընտրություն կատարելը, որևէ աշակերտի կամքին հակառակ նրան մրցույթին մասնակցելուց զրկելը կամ որևէ կերպով նրա մասնակցությանը խոչընդոտելը դեմ են «Կենգուրու» մրցույթի սկզբունքներին և անընդունելի են:*
- 1.2. Ովքեր կարող են մասնակցել մրցույթին
 - Մասնակցության հայտ ներկայացրած դպրոցի 3-12-րդ դասարանների աշակերտներ, քոլեջների 1-3-րդ կուրսերի ուսանողներ, որոնք վճարման անդորրագրերը ներկայացրել են դպրոց/քոլեջ, նրանց անունները ներառված են մասնակիցների ցուցակում, իսկ վճարման անդորրագրերի լուսանկարները կամ տեսապատճենները հայտի և մասնակիցների ցուցակի հետ ուղարկվել են kangaroo@ayb.am էլեկտրոնային հասցեին: Այս աշակերտները սահմանված ժամկետում պետք է գրանցվեն մրցույթի առցանց հարթակում, որպեսզի մրցույթի օրը մուտք գործեն և մասնակցեն:
 - 3-12-րդ դասարանների աշակերտներ կամ քոլեջների 1-3-րդ կուրսերի ուսանողներ, որոնք չեն ներկայացրել անդորրագիրը դպրոց/քոլեջ, այլ անմիջականորեն գրանցվել են մրցույթի առցանց հարթակում ներբեռնելով անդորրագրի լուսանկարը: Այս մասնակիցների օգտահաշիվն ակտիվանում է վճարման ներբեռնված անդորրագրի և գրանցման ժամանակ լրացված տվյալների համապատասխանության ստուգումից հետո:
 - 3-12-րդ դասարանների աշակերտներ, քոլեջի 1-3-րդ կուրսերի ուսանողներ, որոնք գրանցվել են մրցույթի առցանց հարթակում կիրառելով առաջարկվող առցանց վճարման գործիքներից որևէ մեկը:

2. Մրցույթի անցկացում

- 2.1. ՀՀ-ում և Արցախում մրցույթի բացառիկ կազմակերպիչը «Այբ» կրթական հիմնադրամն է: Մրցույթն իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (<https://escs.am/am>), իսկ Արցախում՝ Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության հովանու ներքո:
- 2.2. Մրցույթի կազմակերպման աշխատանքներում ներգրավված են «Այբ» կրթական հիմնադրամը, մարզային համակարգողները և մասնակից կրթական կառույցները (դպրոցներ, քոլեջներ և այլն): Յուրաքանչյուր մասնակից կառույց նշանակում է *մրցույթի պատասխանատուին*, որը համակարգում է մրցույթի կազմակերպման աշխատանքները (աշակերտների տեղեկացում մրցույթի մասին, մասնակիցների ցուցակի, մասնակցության հայտի կազմում):
- 2.3. Յուրաքանչյուր մասնակից աշակերտ (անկախ մրցույթի արդյունքներից) և մասնակից կրթական կառույց ստանում է *մասնակցության էլեկտրոնային հավաստագիր*:
- 2.4. «Կենգուրու 2021» մրցույթը կանցկացվի 2021 թ. մարտի 21-ին՝ հետևյալ ժամերին (Երևանի ժամանակով).
5-12-րդ դասարաններ՝ 11:00-ից 12:15.
3-4-րդ դասարաններ՝ 14:00-ից 15:15:
- 2.5. Մրցույթի պատասխանատուն մրցույթի մասին տեղեկացնում է աշակերտներին, գրանցում վճարման անդորրագիրը դպրոց ներկայացրած մասնակիցների տվյալները «Մասնակիցների ցուցակ» հատուկ նիշքում (file), հավաքում վճարման անդորրագրերը (բնօրինակներ, պատճեններ), կազմում և ուղարկում մասնակցության էլեկտրոնային

փաթեթը՝ հայտը, «Մասնակիցների ցուցակի» էլեկտրոնային տարբերակը, վճարման անդորրագրերի լուսանկարները կամ լուսապատճենները kangaroo@ayb.am էլ. հասցեին: Մասնակիցները նաև կարող են գրանցվել ինքնուրույն՝ մրցույթի առցանց հարթակում: Պատասխանատուն անմիջական կապի մեջ է «Այբ» կրթական հիմնադրամի աշխատակիցների հետ և տեղեկացնում է մրցույթի մասնակիցներին (անկախ գրանցման նախընտրված տարբերակից) բոլոր նորությունների մասին:

2.6. Մրցութային հարթակը հնարավորություն է տալիս մրցույթին մասնակցելու համար ընտրել գրանցման 3 տարբերակներից ցանկացած մեկը, կախված այդ ընտրությունից՝ վճարել կամ նախապես (բանկ, վճարային տերմինալներ), կամ անմիջապես հարթակում օգտվելով առցանց վճարման հետևյալ հնարավորություններից՝ «Թելսել» էլեկտրոնային դրամապանակից կամ բանկային քարտից: Եթե վճարումը կատարվել է նախապես (ո՛չ առցանց հարթակում) և առկա է վճարման անդորրագիրը, աշակերտը կարող է՝

- անդորրագիրը ներկայացնել դպրոց և ներառվել դպրոցի մասնակիցների ցուցակում, որից հետո սահմանված ժամկետում պետք է գրանցվի մրցույթի հարթակում որպես օգտատեր.
- ներբեռնելով անդորրագրի նիշքը՝ գրանցվել հարթակում և դառնալ օգտատեր՝ ստանալով գրանցման հաստատումը «Այբ» կրթական հիմնադրամից:

2.7. Մրցույթն անցկացվում է առցանց՝ test.contests.am հարթակում: Մրցույթի մասնակիցը համացանցին հասանելիություն ունեցող որևէ թվային սարքի միջոցով (հեռախոս, համակարգիչ, պլանշետ) *գրանցվում է հարթակում սեղմելով «Գրանցվել» կոճակը*, հաջորդական քայլերով ընտրում կամ լրացնում պահանջվող տվյալները: Լրացված տվյալների ճշգրտությունը, դրանք հիշելը և ճիշտ կիրառելը մրցույթի ժամանակ անխափան մուտքի և մասնակցության գրավականներից են: Հարթակում գրանցման տարբերակից կախված ընտրվող կամ լրացվող տվյալների քանակը տարբեր է: Ներբեռնված ցուցակներից ընտրվող տվյալներն են՝ մարզ, համայնք, կրթական հաստատություն, անուն-ազգանուն: Գրանցվողի կողմից լրացվող, մուտքագրվող տվյալներն են՝ գործող էլ. փոստի հասցեն, ծննդյան վկայականի համարը (անհրաժեշտ է մասնակցին անհատականացնելու համար), հեռախոսահամարը, որին կարճ հաղորդագրությամբ ուղարկվում է վավերացման կոդը, գաղտնաբառը (սա պետք է հիշել ամենայն ճշգրտությամբ, որպեսզի մրցույթի օրը մուտք գործելիս խնդիրներ չառաջանան): Եթե մասնակիցը չի ներառվել դպրոցի ցուցակում և գրանցվում է հարթակում կցելով անդորրագրի նիշքը կամ գրանցման ընթացքում վճարում կատարելով, ապա պետք է մուտքագրի նաև անունը, ազգանունը, հայրանունը:

2.8. Մրցույթի օրը մասնակիցները պետք է մուտք գործեն հարթակ, որտեղ նշված ժամին հասանելի կլինեն առաջադրանքները: Մրցույթի ընթացքում մասնակիցը պետք է մենակ լինի սենյակում, որպեսզի կարողանա կենտրոնանալ առաջադրանքների լուծման վրա և հնարավորինս չշեղվի՝ կորցնելով թանկարժեք ժամանակը: Եթե դա անհնար է, ապա ընտանիքի անդամները պետք է պահպանեն լռություն, չմիջամտեն, չխանգարեն մասնակցին ինքնուրույն աշխատել: *Հիշեցնենք, որ մրցույթի հեղինակությունն ու արդյունքների ճշտությունը կախված են մրցույթի անցկացման պատշաճությունից*: Նախքան մրցույթը հարթակում ակտիվ կլինեն փորձնական թեստեր նախորդ տարիների մրցութային առաջադրանքներով, ինչը հնարավորություն կտա հարթակում գրանցված և մուտք գործած օգտատիրոջը հասկանալու մրցույթի առաջադրանքի կառուցվածքը, նրա հետ աշխատելու սկզբունքները և որոշ չափով հմտանալու:

2.9. Մրցույթին նույն ընտանիքից մեկից ավելի երեխաների մասնակցության դեպքում նրանք պետք է օգտվեն տարբեր սարքերից, խիստ ցանկալի է՝ գտնվեն տարբեր սենյակներում, աշխատեն ինքնուրույն, խուսափեն խորհրդակցելուց, միմյանց չխանգարեն:

2.10. Մրցույթի ժամանակ մասնակիցը սևագրության համար կարող է օգտագործել *մաքուր թուղթ*: Արգելվում է օգտվել ցանկացած հաշվիչ սարքից: Մրցույթի ժամանակ ցանկալի է չձանրաբեռնել համացանցային կապը այդ պահին ոչ հրատապ այլ գործողություններով: Օրինակ՝ երբ մասնակիցը թեստ է լրացնում, ցանկալի է այդ պահին չնայել առցանց ֆիլմ կամ տեսահոլովակ, չխաղալ առցանց խաղեր և չանել այլ գործողություններ, որոնք կարող են խափանել կամ դանդաղեցնել համացանցային կապը:

2.11. Մրցույթի ընթացքում *նույն մասնակցի տվյալներով չի կարելի մուտք գործել հարթակ մեկից ավելի թվային սարքերով, այլապես համակարգն այդ մուտքերը կասկածելի է համարում և մասնակցի աշխատանքը խափանում*: Մրցույթի 75 րոպեների ընթացքում պարտադիր է ինքնուրույն աշխատելու համար անհրաժեշտ պայմանների, անխափան համացանցային կապի ապահովումը: *Հուշումները, այլ աղբյուրներից (ներառյալ համացանցային) օգտվելը, միջամտությունները, խոսելն ու քննարկումները խստիվ արգելվում են*:

2.12. Մրցույթի կանոնները գետեղված են հարթակում, և գրանցվելիս պետք է ծանոթանալ դրանց բովանդակությանն ու հաստատել դա: Մրցույթի առաջադրանքների լուծման համար հատկացվում է ուղիղ 75 րոպե: Այս ժամանակը հաշվարկվում է ըստ տարիքային խմբերի՝ մրցույթի մեկնարկից սկսած, այսինքն՝ այն պահից, երբ հարթակում առաջադրանքները մասնակիցների համար հասանելի են դառնում: 75 րոպե հետո մրցույթն ավարտվում է, և թեստը դառնում է անհասանելի, իսկ մասնակցի նշած պատասխանները պահպանվում են և ուղարկվում հետագա ստուգման:

2.13. Հարթակում գրանցվելիս որպես օգտանուն պետք է ճշգրիտ մուտքագրել գործող Էլ. փոստի հասցե, որն Էլ հետագայում կապի միջոց է դառնում «Այբ» հիմնադրամի և տվյալ մասնակցի միջև:



Հարթակում նախապես գրանցված և մուտք գործած մասնակիցը մրցույթի մեկնարկի ժամանակ, «Թեստեր» ենթագրից ակտիվացնելով «Անցնել թեստը» հրահանգը, ստանում է հնարավորություն թեստային առաջադրանքները լուծելու: Այդ պահից հաշվարկվում է մրցույթի ժամանակը՝ 75 րոպե:

2.14. Խորհուրդ ենք տալիս մասնակիցներին երկար կանգ չառնել մեկ հարցի վրա, եթե դրան պատասխանել չի հաջողվում: Նպատակահարմար է անցնել հաջորդ հարցին, ապա վերջում վերադառնալ չլուծված խնդրին: Երբ մասնակիցը հարթակում ակտիվացնում է «Անցնել թեստը» հրահանգը, Էկրանի վերևում սկսում է 75 րոպեի հետհաշվարկը, ինչը մասնակցին հնարավորություն է տալիս ավելի ճշգրիտ կառավարելու իր ժամանակը:

2.15. Յուրաքանչյուր առաջադրանք ունի պատասխանի հինգ տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Լուծելով առաջադրանքը՝ մասնակիցը նշում է տվյալ առաջադրանքի ներքևում առկա պատասխանի 5 տարբերակներից մեկը: Եթե որևէ առաջադրանքի պատասխաններից մասնակիցը չի նշում ոչ մեկը, ապա առաջադրանքը համարվում է չլուծված: Չլուծված առաջադրանքի համար միավոր չի հանվում:

2.16. Թեստը մասնակցին հասանելի դառնալուց և ժամանակի հետհաշվարկի սկզբից ուղիղ 75 րոպե հետո մրցույթն ընդհատվում է, և թեստը համարվում է ավարտված: Եթե ինչ-որ պահից սկսած մասնակցի մոտ լինում են տեխնիկական խափանումներ, ապա մինչ այդ նրա լրացրած պատասխանները պահպանվում են հարթակում: Կապի վերականգնումից հետո նա կարող է վերադառնալ համակարգ, սակայն այդ դեպքում նա կորցրած կլինի թեստի համար հատկացված ժամանակը կամ դրա մի մասը:

3. Արդյունքների ամփոփում

- 3.1.** Բոլոր մասնակիցների աշխատանքները հարթակից ելքագրվում են հատուկ համակարգչային ծրագիր, որի միջոցով իրականացվում է ստուգումը: Աշխատանքների ստուգումը տևում է առնվազն մեկուկես ամիս, որից հետո մոտ մեկ շաբաթվա ընթացքում ձևավորվում են ընդհանուր ցուցակներ՝ ըստ տարիքային խմբերի: Այդ ցուցակների հիման վրա կազմվում են հաշվետվություններ, որոնք հետագայում ուղարկվում են մասնակից կրթական կառույցներին: *Յուրաքանչյուր կրթական կառույց ստանում է հաշվետվություն միայն իր մասնակից աշակերտների ընդհանուր արդյունքների մասին, որտեղ անհատականացված տվյալներ չկան:*
- 3.2.** Յուրաքանչյուր մասնակից գրանցման ժամանակ նշած էլ. հասցեին նամակ է ստանում, որով տեղեկացվում է իր վաստակած միավորի մասին: Էլ. հասցեն պետք է ճշգրիտ լինի. եթե մասնակիցը հարթակում գրանցվելիս էլ. հասցեն լրացնում ու պահպանում է վրիպակով, ապա դրա համար ինքն է պատասխանատու: Այդ դեպքում թեստի իր արդյունքները նա կարող է ուշ ստանալ՝ պատասխանների ստացման վերջնաժամկետից մինչև երկու ամիս ուշացմամբ:
- 3.3.** Մրցույթի արդյունքների հավաստիության ու անկողմնակալության ապահովման համար պատասխանատու են թե՛ մասնակիցները, թե՛ կազմակերպիչները: Մասնակիցները պարտավորվում են աշխատել ինքնուրույն, առանց կողմնակի միջամտության և օգնության՝ հնարավորինս բացահայտելով սեփական ներուժը, ինչը տարեցտարի նրանց համար կապահովի մտքի և այնպիսի հմտությունների զարգացում, ինչպիսին են ժամանակի ճիշտ կառավարումը և ոչ ստանդարտ խնդիրների լուծումը: Ծնողներից ու ընտանիքի մյուս անդամներից մեր պահանջն է տալ մասնակցին ինքնադրսևորվելու և զարգանալու իրական հնարավորություն: Իր հերթին «Այբ»-ը երաշխավորում է գործընթացների կազմակերպման անաչառություն և անկողմնակալություն՝ նախևառաջ ապահովելով մրցույթի առաջադրանքների եզակիությունը և նախքան մրցույթի մեկնարկը դրանց գաղտնիությունը:
- 3.4.** Եթե մասնակիցը ցանկանում է մրցույթի ավարտից հետո ստացվող արդյունքները բողոքարկել, պետք է ունենա իր արդյունքների հավաստիության հստակ ապացույցներ և Էլեկտրոնային նամակով դիմում ներկայացնի kangaroo@ayb.am հասցեին՝ կցելով այդ ապացույցները:
- 3.5.** Պատասխանների համակարգչային մշակումից հետո կատարվում է տվյալ դպրոցի միևնույն տարիքային խմբի բոլոր աշխատանքների համադրում՝ համընկնումների հայտնաբերման նպատակով: Արդյունքների ամփոփ ցանկերում համընկնող աշխատանքների կողքին կատարվում է «Արտագրության կասկած» նշումը: Բոլոր մասնակիցների արդյունքների վերլուծությունից հետո «Այբ» կրթական հիմնադրամը որևէ կասկածի դեպքում իրավունք ունի անցկացնելու մրցույթի հավելյալ ստուգիչ փուլեր:
- 3.6.** Ստուգման և վերլուծության արդյունքում մրցույթի կանոնների կոպիտ խախտումների բացահայտման դեպքում «Այբ»-ն իրավասու է որակազրկելու (հանելու մասնակիցների ցուցակից կամ չեղյալ համարելու առանց որևէ փոխհատուցման) առանձին մասնակիցների: Այսպիսի որակազրկման կամ կանոնների կոպիտ խախտման վերաբերյալ «Այբ»-ը նամակ-նախազգուշացում է ուղարկում տվյալ մասնակցին՝ խնդրելով ձեռնարկել բոլոր միջոցները՝ կանոնների խախտումներն ապագայում բացառելու համար: Նույն մասնակցին երկու տարի անընդմեջ նամակ-նախազգուշացում ուղարկելու դեպքում «Այբ»-ը ստիպված կլինի մեկ տարով չթույլատրել այդ մասնակցին մասնակցել մրցույթին:
- 3.7.** Մինչ արդյունքների հրապարակումը մրցույթի կազմակերպիչները պարտավոր են լրացուցիչ հանդիպում (թեստավորում, հարցազրույց) անցկացնել հավանական հաղթողների (հաղթողի միավորների շեմը հաղթահարած մասնակիցների) և լավագույն մրցանակի հավակնորդների

հետ՝ վերահաստատելու վերջիններիս արդյունքները: Լրացուցիչ հանդիպման արդյունքում հավանական հաղթողը հավակնում է ճանաչվելու բացարձակ հաղթող, եթե լրացուցիչ հանդիպման ընթացքում տրված բոլոր հարցերին ու խնդիրներին տվել է ճիշտ պատասխաններ: Լավագույն արդյունք արձանագրած մասնակիցների և արդյունքների հավաստիությունն ապահովելու համար մասնակիցների հետ «Այբ» կրթական հիմնադրամն իրավասու է հավելյալ թեստ կամ ստուգիչ հանդիպում անցկացնելու՝ նրանց արդյունքները վերահաստատելու և վերջնական մրցանակակիրներին որոշելու համար: Լրացուցիչ հանդիպումների արդյունքների վերջնական հաստատումն արվում է «Այբ» կրթական հիմնադրամի կողմից, ինչի վերաբերյալ նամակ է ուղարկվում լրացուցիչ հանդիպման մասնակից աշակերտների էլ. հասցեներին: Լրացուցիչ թեստի անցկացման մասին մասնակիցը տեղեկացվում է նախապես մասնակցի էլ. հասցեին ուղարկված նամակով կամ հարթակում գրանցված հեռախոսահամարին ստացած sms հաղորդագրության միջոցով:

- 3.8. Բոլոր աշխատանքները պահվում են «Այբ»-ում մրցույթի անցկացման օրից հետո 4 ամիս: Մինչև այդ պահն ընդունվում են բողոքարկման հայտեր: Բողոքարկել կարող է ծնողը կամ դպրոցը այն դեպքում, եթե մասնակցի անունը չկա արդյունքների հաշվետվությունում կամ եթե կասկածի տակ է դրվում ստուգման ճշտությունը: *Առաջադրանքների բովանդակության և/կամ պատասխանների տարբերակների ճիշտ կամ սխալ լինելու վերաբերյալ բողոքներ չեն ընդունվում, քանի որ առաջադրանքները և դրանց պատասխանների տարբերակները մշակում և ընդունում է միջազգային մրցույթի կազմակերպիչը:*
- 3.9. *Մասնակից դպրոցների արդյունքները չեն համեմատվում:* Մրցույթից մոտ չորս ամիս հետո բոլոր դպրոցներին ուղարկվում են արդյունքների ամփոփ հաշվետվությունները, որոնցում տրվում են մասնակիցների մասին միայն ընդհանուր տեղեկություններ՝ առանց անհատական տվյալների: Հիշեցնում ենք՝ դպրոցը ստանում է տեղեկություն միայն իր աշակերտների արդյունքների վերաբերյալ:

4. Մրցանակաբաշխություն

- 4.1. Բոլոր մասնակիցների, մրցանակակիր հաղթողների մրցանակաբաշխությունը իրականացվում է մրցանակային ֆոնդից, որը ձևավորվում է մասնակցության վճարներից և հովանավորների միջոցներից: Բոլոր մասնակիցների համար նախատեսված են Էլեկտրոնային հավաստագրեր ու Էլեկտրոնային փոքրիկ հուշանվերներ:
- 4.2. Լավագույն կարգի բոլոր մրցանակակիրները ստանում են խրախուսական մրցանակներ և պատվոգրեր, իսկ մրցույթի հաղթողները՝ գլխավոր մրցանակ: Բոլոր մասնակից դպրոցները ստանում են մասնակցության Էլեկտրոնային հավաստագրեր:
- 4.3. Հաղթողները որոշվում են տվյալ տարվա բոլոր մասնակիցների արդյունքների ընդհանուր հաշվետվության արդյունքում: Գլխավոր մրցանակը սահմանում է «Այբ» կրթական հիմնադրամը՝ կախված տվյալ տարվա ընդհանուր արդյունքներից և հաղթողների թվից: Գլխավոր մրցանակն արժեքավոր նվեր է կամ «Կենդուրու առանց սահմանների» ընկերակցության անդամ որևէ երկրում կազմակերպվող ամառային ճամբարի ուղեգիր: Ուղեգիրը ներառում է ճամբարում մնալու բոլոր ծախսերը, ճանապարհաձախսը, ապահովագրությունը և ելքի արտոնագիրը (վիզան): Ամառային ճամբարի ուղեգիրը որպես գլխավոր մրցանակ սահմանելը որոշում է «Այբ» կրթական հիմնադրամը՝ կախված տվյալ տարվա հաղթողների թվից, ամառային ճամբարների առաջարկից և տվյալ տարում Հայաստանին հատկացված տեղերի քանակից: Ամառային ճամբարների ուղեգրեր կարող են տրվել միայն տվյալ տարվա հունիսի 1-ի դրությամբ 12 տարեկանը բոլորած հաղթողներին, ովքեր բավարար չափով տիրապետում են անգլերենին:

5. Մասնակցության վճար

- 5.1. Մրցույթի մասնակցության վճարը 970 ՀՀ դրամ է: Այդ գումարն օգտագործվում է բացառապես կազմակերպչական աշխատանքների և մրցանակների համար:
- 5.2. Մասնակցել ցանկացողները վճարումները կատարում են ՀՀ-ում «ՎՏԲ-Հայաստան» բանկի 16044015767700 հաշվեհամարին, իսկ Արցախում՝ «Արցախբանկ»-ի 223171002460 հաշվեհամարին՝ բանկային մասնաճյուղերում կամ «Թելսել» (Telcell) և «Իզի Փեյ» (EasyPay) տերմինալների միջոցով. կարելի է վճարել նաև մրցույթի հարթակում առցանց վճարման միջոցով՝ օգտվելով «Թելսելի» Էլեկտրոնային դրամապանակի ծառայություններից կամ բանկային քարտի միջոցով: Բանկի մասնաճյուղում վճարում անելիս պետք է հայտնել վճարման նպատակը՝ աշակերտի անուն-ազգանուն-հայրանունը, դասարանը, դպրոցի անվանումն ու համայնքը: Բանկային անդորրագրերը կարող են դուրս գրվել ինչպես մեկ կամ մի քանի աշակերտի անունով, այնպես էլ՝ ըստ խմբային ցուցակների: «Թելսել» և «Իզի Փեյ» տերմինալներով վճարումը, ինչպես և վճարումը առցանց հարթակում, յուրաքանչյուր աշակերտի համար կատարվում է առանձին:
- 5.3. Մրցույթին մասնակցելու համար վճարելը բավարար չէ. աշակերտն անպայման պետք է գրանցվի մրցույթի անցկացման առցանց հարթակում և մրցույթի ժամանակ մուտք գործի որպես օգտատեր: Մրցույթի հարթակում գրանցվելու տարբերակներն են՝
- ա) անդորրագիրը ներկայացնել դպրոց, ներառվել դպրոցի մասնակիցների ցուցակում, իսկ սահմանված ժամկետից հետո դպրոցների տրամադրած տվյալների շտեմարանից ընտրել համապատասխան տվյալներով աշակերտին՝ ակտիվացնելով օգտահաշիվը.
 - բ) վճարման անդորրագրի նիշքը ներբեռնելով՝ գրանցվել հարթակում (այս դեպքում օգտահաշիվն ակտիվանում է լրացված տվյալների և անդորրագրի տվյալների համապատասխանության ստուգումից հետո).
 - գ) հարթակում գրանցվել որպես օգտատեր՝ միաժամանակ վճարելով մասնակցության համար առցանց գործիքների («Թելսել» Էլեկտրոնային դրամապանակ կամ բանկային քարտի տվյալներ) միջոցով:
- 5.4. Եթե աշակերտը չի մասնակցել մրցույթին (վճարում կատարած լինելով հանդերձ՝ իր անունը չի գտել դպրոցի ցուցակում, չի գրանցվել հարթակում, և նրա լուծած առաջադրանքների պատասխանները չկան հարթակում վերբեռնված ցուցակում), ապա նա կարող է հետ պահանջել մասնակցության վճարը՝ դիմելով «Այբ» կրթական հիմնադրամ մրցույթի օրից հաշված մեկ ամսվա ընթացքում: Գումարը կվերադարձվի բացառապես տվյալ աշակերտի ծնողին՝ վերջինիս դիմումի հիման վրա: Նշված ժամկետից հետո գումարը չի վերադարձվում:

6. Դպրոցի և մասնակիցների քայլերի հաջորդականություն

- 6.1. Դպրոցները մրցույթին մասնակցելու հրավերը ստանալուց հետո մինչև *մասնակցության հայտի ներկայացման վերջնաժամկետը* նախապատրաստվում են մրցույթին հետևյալ կերպ:
- Նշանակում են դպրոցում մրցույթի պատասխանատուին:
 - Իրազեկում են աշակերտներին և նրանց ծնողներին մրցույթի և դրա անցկացման կարգի մասին՝ օգտագործելով դպրոցում կիրառվող Էլեկտրոնային գործիքները (դպրոցի ֆեյսբուքյան էջ, դասարանների վայբերյան խմբեր, տեղեկատվության այլ միջոցներ):
 - Ըստ անհրաժեշտության տպում և աշակերտներին բաժանում են բանկում վճարման կարգի հիշեցման թերթիկները, հիշեցնում նրանց վճարման անդորրագրերը դպրոց ներկայացնելու և դպրոցի ցուցակում գրանցվելու վերջնաժամկետի մասին:
 - Հավաքում են աշակերտներից վճարման անդորրագրերը և նրանց գրանցում «Մասնակիցների ցուցակում» մինչև հայտարարված վերջնաժամկետը:

- «Մասնակիցների ցուցակի» հատուկ ձևը բեռնում են www.contests.am կայքից կամ, կապվելով «Այբ» կրթական հիմնադրամի հետ, ստանում էլ. փոստով: Ցուցակը լրացվում է *բացառապես «Այբ»-ի տրամադրած Էլեկտրոնային կիշքում (file)*, .xls ձևաչափով, Sylfaen տառատեսակով (Unicode): Կիշքն անվանվում է հետևյալ կերպ՝ «դպրոցի ծածկագիր.xls» (օրինակ՝ 1234567.xls) և ուղարկվում kangaroo@ayb.am Էլեկտրոնային հասցեին մինչև հայտի ներկայացման վերջնաժամկետը:
- Բեռնում են դպրոցի մասնակցության հայտի ձևը www.contests.am կայքից, այն լրացնում համակարգչով, տպում, ստորագրում, կնքում դպրոցի կնիքով, որից հետո փաստաթղթի տեսածրված տարբերակը (scan) և excel կիշքը ուղարկում kangaroo@ayb.am Էլեկտրոնային հասցեին:



Խնդրում ենք նկատի ունենալ, որ աշակերտների վճարման անդորրագրերը դպրոց ներկայացնելու, դպրոցի ցուցակում գրանցվելու վերջնաժամկետը և դպրոցի մասնակցության հայտը ներկայացնելու վերջնաժամկետը տարբեր ամսաթվեր են:

- 6.2. Մինչև հայտի ներկայացման վերջնաժամկետը դպրոցները Էլեկտրոնային նամակով kangaroo@ayb.am Էլեկտրոնային հասցեին ուղարկում են դպրոցի մասնակցության փաթեթը, որը ներառում է՝
- մրցույթի մասնակցության հայտի լրացված, ստորագրված և կնքված ձևի տեսածրված տարբերակը և նույնի excel կիշքը.
 - «Մասնակիցների ցուցակի» Էլեկտրոնային տարբերակը,
 - վճարման անդորրագրերի (յուրաքանչյուր աշակերտի անունով) Էլեկտրոնային նմուշները (Էլեկտրոնային անդորրագիր, թղթային անդորրագրի լուսանկար կամ տեսածրված տարբերակ):



Հայտը չներկայացնելու կամ ուշացնելու դեպքում դպրոցը ՄՐՑՈՒՅԹԻՆ ՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ: Հայտը հիմք է դպրոցի մասնակցության վճարում կատարած աշակերտների ցուցակը մրցութային հարթակում տեղադրելու համար, որը հնարավորություն կտա նրանց գրանցվելու և մրցույթին մասնակցելու:

- 6.3. Մրցույթին մասնակցել ցանկացողները, դպրոցից կամ որևէ այլ աղբյուրից տեղեկանալով մրցույթի մեկնարկի մասին «Այբ» հիմնադրամի պաշտոնական հայտարարությանը, պետք է անեն ներքոբերյալը:
- Տեղեկացնեն դպրոցում մրցույթի պատասխանատուին, որ ցանկանում են մասնակցել մրցույթին:
 - Մասնակցության համար վճարում կատարեն բանկում, վճարային տերմինալներով կամ առցանց բանկային համակարգով՝ սահմանված ժամկետներում (ժամկետների մասին տեղեկությունը կարելի է ստանալ դպրոցից կամ «Այբ» հիմնադրամից):
 - Մասնակցության վճարի անդորրագիրը ներկայացնեն դպրոց, ներառվեն դպրոցի մասնակիցների ցուցակում կամ անմիջականորեն գրանցվեն մրցույթի առցանց հարթակում արդեն առկա անդորրագրով կամ առցանց վճարելով:
 - Համացանցին հասանելիություն ունեցող որևէ թվային սարքով գրանցվեն մրցույթի առցանց հարթակում՝ իրենց անհատական օգտահաշիվն ակտիվացնելով: Գրանցման համար մասնակիցը պետք է ունենա գործող Էլ. հասցե (կարող է օգտվել ծնողի Էլ. հասցեից, սակայն

պետք է հաշվի առնել, որ մեկ էլ. հասցեով կարող է գրանցվել միայն մեկ մասնակից): Հետագայում գրանցման էլ. հասցեն լինելու է մասնակցի մուտքանունը, իսկ գաղտնաբառը (սվազագույնը ութ նիշ՝ լատիներեն մեծատառ և փոքրատառ, նաև թվանշան) պետք է ճշգրիտ հիշել, որ հարթակ մուտք գործելիս խնդիրներ չառաջանան:

- Գրանցման ընթացքում համակարգն ուղղորդում է ծանոթանալու մրցույթի կանոններին և հաստատելու դրանց համաձայն լինելը:
 - Գրանցման ավարտին համակարգը կարճ հաղորդագրություն (sms) է ուղարկում մասնակցի նշած հեռախոսահամարին և պահանջում լրացնել ուղարկված կոդը:
 - Եթե մասնակիցը ճիշտ է կատարել գրանցման քայլերը, համակարգը նրան տանում է օգտատիրոջ դաշտ, որտեղ նա տեսնում է իր անուն-ազգանունը և կարող է օգտվել հարթակի ընձեռած հնարավորություններից (նախքան մրցույթի օրը «Թեստեր» բաժնում հասանելի կլինի փորձնական թեստի նմուշ, որը կարելի է լրացնել, նշել պատասխանները):
 - Մրցույթի օրը մինչև մրցույթի մեկնարկը հարթակում գրանցված յուրաքանչյուր մասնակից իր մուտքանունով (գրանցման ժամանակ նշած էլ. հասցե) և գաղտնաբառով մուտք է գործում հարթակ:
 - ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Մրցույթի ընթացքում եթե նույն մասնակիցը մեկից ավելի սարքերով է մուտք գործում, համակարգն այդ մուքերը կասկածելի է համարում, և մասնակցի հետագա աշխատանքը հարթակում խափանվում է:
 - Մրցույթի մեկնարկից հետո հարթակի «Թեստեր» բաժնում ընտրելով «Անցնել թեստը» հրահանգը՝ մասնակիցն իր Էջում տեսնում է իր տարիքային խմբի առաջադրանքները. այդ պահից սկսվում է մրցութային ժամանակի՝ 75 րոպեի հետհաշվարկը:
 - Լուծելով առաջադրանքը՝ մասնակիցը նշում է այն պատասխանը, որը ճիշտ է համարում: Յուրաքանչյուր առաջադրանքի համար պատասխանների առաջարկվող հինգ տարբերակից ճիշտ է միայն մեկը, և պետք է նշել միայն մեկ տարբերակ: Պատասխանի նշված տարբերակ չունեցող առաջադրանքը համարվում է չկատարված:
 - Թեստի հետ աշխատանքը վերջացնելուց հետո մասնակիցը սեղմում է «Հաստատել» կոճակը վերջին առաջադրանքի ներքևում, որից հետո թեստը փակվում է և այլևս հասանելի չի լինում փոփոխությունների համար: Այդ իսկ պատճառով ՉԻ ԿԱՐԵԼԻ անավարտ աշխատանքը հաստատել:
 - Սակայն եթե ժամանակը սպառվել է, ինչի պատճառով թեստը դարձել է անհասանելի, պետք չէ անհանգստանալ. նշված պատասխանները պահպանվում են և ենթակա են ստուգման:
 - Հարթակում աշխատելիս խիստ ցանկալի է չձանրաբեռնել տան համացանցային կապը այլ սարքերով տեսանյութ դիտելով, առցանց խաղերով կամ մեծածավալ նյութեր բեռնելով: Համացանցային հնարավոր խափանումներից խուսափելու համար այդ 75 րոպեի ընթացքում նախատեսված միայն հարթակի օգտագործումը:
- 6.4. Բողոքարկումների դիմումները (ներկայացվում են դպրոցների կողմից կամ մասնակցի ծնողների կամ օրինական ներկայացուցիչների) ընդունվում են «Այբ» կրթական հիմնադրամում մրցույթի անցկացման օրից հետո 4 ամիս: